

**«ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԵՔԵՆԱՆԵՐԻ ԵՎ ՄԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ՇԱՀԱԳՈՐԾՈՒՄ,
ՆՈՐՈԳՈՒՄ» ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ «ՏԵԽՆԻԿ» ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՇՆՈՐՀՄԱՆ՝
ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԳԻՏԵԼԻՔՆԵՐԻ ԵՎ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ
ՉԱՓԱՆԻՇՆԵՐ**

«Գյուղատնտեսական մեքենաների և սարքավորումների շահագործում, նորոգում» մասնագիտության «Տեխնիկ» որակավորման շնորհման՝ մասնագիտական գիտելիքների և կարողությունների գնահատման չափանիշներն են՝

1. համապատասխան պետական կրթական (որակավորման) չափորոշիչի բոլոր մոդուլների ուսումնառության արդյունքներով սահմանված մասնագիտական գիտելիքները, որոնց ստուգումն իրականացվում է հարց ու պատասխանի կամ համալիր թեստային հարցման միջոցով: Թեստը բաղկացած է վերոնշյալ բոլոր ուսումնառության արդյունքներին վերաբերող նյութերից՝ ընդհանուր թվով 40 հարցից:

Արդյունքը համարվում է բավարար, եթե ճիշտ պատասխաններ են տրվել թեստային առաջադրանքի հարցերի առնվազն 75%-ին:

2. Մասնագիտական կարողությունները, որոնց ստուգման համար պահանջվում է սահմանված ժամանակում կատարել հետևյալ գործողությունները՝

- հայտնաբերում և որոշում է գյուղատնտեսական մեքենայի կամ սարքավորման անսարքությունները և վերանորոգման տեսակները
- համակարգում է գյուղատնտեսական մեքենաների կամ սարքավորումների նորոգման աշխատանքները,
- կատարում է չափումներ և որոշում պահանջվող վերանորոգման աստիճանը,
- կատարում է չափումներ և հսկում է բանվորների աշխատանքը,
- կազմակերպում է վերանորոգված գյուղատնտեսական մեքենաների կամ սարքավորումների հավաքումը,
- վերահսկում է գյուղատնտեսական մեքենաների և սարքավորումների շահագործման և նորոգման համապատասխան փաստաթղթային գրառումները և տալիս կատարված աշխատանքների հաշվետվություն,
- ստուգում է վերանորոգված գյուղատնտեսական մեքենաների և սարքավորումների որակավորումը,
- կազմում է մշակության տեխնոլոգիական քարտը,
- կազմում է գյուղատնտեսական մեքենաների և սարքավորումների շահագործման, տեխնիկական սպասարկման և նորոգման աշխատանքային գրաֆիկը,

Արդյունքը համարվում է բավարար, եթե վերոնշյալ գործողությունների առնվազն 90%-ը կատարվել է չափորոշիչներով նախատեսված չափանիշներին համապատասխան՝ պահպանելով աշխատանքի անվտանգության և հիգիենայի կանոններն ու նորմերը:

«Գյուղատնտեսական մեքենաների և սարքավորումների շահագործում և նորոգում»
մասնագիտության նկարագիրը

Հ/Հ	Անվանումներ	Նկարագրեր
1.	Մասնագիտության անվանումը	Գյուղատնտեսական մեքենաների և սարքավորումների շահագործում, նորոգում
2.	Դերը	Գյուղատնտեսական մեքենաների և սարքավորումների շահագործում, նորոգում մասնագիտության շրջանավարտը իրականացնում է գյուղատնտեսական մեքենաների և սարքավորումների շահագործման և նորոգման կազմակերպումը տարբեր իրավական կարգավիճակ ունեցող կազմակերպություններում
3.	Խնդիրների բնագավառը	Գյուղատնտեսական մեքենաների և սարքավորումների անխափան տնտեսապես արդյունավետ շահագործումը, դրանց նորոգման աշխատանքների կազմակերպումը
4.	Աշխատանքային գործընթացները	
4.1.	Գործընթաց 1	Գյուղատնտեսական մեքենաների և սարքավորումների շահագործման կազմակերպում
4.2.	Գործընթաց 2	Գյուղատնտեսական մեքենաների և սարքավորումների անսարքությունների բացահայտման և դրանց տեխնիկական սպասարկման ու նորոգման աշխատանքների կազմակերպում
4.3.	Գործընթաց 3	Մասնակցություն գյուղատնտեսական մեքենաների և սարքավորումների լաբորատոր և շահագործական փորձարկումներին
4.4.	Գործընթաց 4	Մասնակցություն գյուղատնտեսական մեքենաների և սարքավորումների տեխնիկատնտեսական արդյունավետության հիմնավորմանը
4.5.	Գործընթաց 5	Մասնակցություն գյուղատնտեսական մեքենաների և սարքավորումների շահագործման ընթացքում տարբեր բնույթի փաստաթղթերի մշակմանը, դրանց պահպանմանը և փոխանցմանը
4.6.	Գործընթաց 6	Գյուղատնտեսական մեքենաների և սարքավորումների շահագործման ժամանակ անհրաժեշտ պարզագույն հաշվարկներ կատարում, գծագրերի, սխեմաների մշակում
4.7.	Գործընթաց 7	Գյուղատնտեսական մեքենաների և սարքավորումների շահագործման և նորոգման վերաբերյալ վիճակագրական տվյալներ հավաքագրում
4.8.	Գործընթաց 8	Գյուղատնտեսական մեքենաների և սարքավորումների արտադրական գործընթացների ագրոտեխնիկական պահանջների ապահովման իրականացում

Հ/Հ	Անվանումներ	Նկարագրեր
5	Մասնագիտական գիտելիքները	<p>Աշխատողը պետք է իմանա.</p> <ul style="list-style-type: none"> • Գյուղատնտեսական մեքենաների և սարքավորումների շահագործման և վերանորոգման վերաբերյալ նորմատիվ իրավական ակտերը և տեղեկատվական նյութերը, • Մասնագիտական և տեղեկատվական գրականության, աշխատանքային կանոնակարգերում կիրառվող տերմինների բացատրությունը, • Գյուղատնտեսական մեքենաների և սարքավորումների շահագործման և նորոգման տեխնոլոգիական գործընթացները, • Գյուղատնտեսական մեքենաների և սարքավորումների կառուցվածքային առանձնահատկությունները, դրանց նշանակությունը, աշխատանքի սկզբունքները, • Գյուղատնտեսական մեքենաների և սարքավորումների շահագործման կանոնները, • Գյուղատնտեսական մեքենաների և սարքավորումների տեխնիկական սպասարկման առանձնահատկությունները, • Գյուղատնտեսական մեքենաների և սարքավորումների ինսամբլի և պահպանման առանձնահատկությունները, • Գյուղատնտեսական մեքենաների և սարքավորումների զննման, անսարքությունների բացահայտման և դրանց վերանորոգման եղանակները, • Գյուղատնտեսական մեքենաների և սարքավորումների աշխատանքային պարամետրերի վերահսկողության ձևերը՝ դրանց շահագործման ժամանակ, • Պարզ հաշվարկներ, գծագրեր կատարելը կապված գյուղատնտեսական մեքենաների և սարքավորումների շահագործման և նորոգման գործընթացների հետ, • Մշակաբույսերի մշակության մեխորացիայի և բերքահավաքի ագրոտեխնիկական պահանջները • Չափիչ-ստուգիչ սարքերից և սարքավորումներից օգտվելու կարգը, • Համակարգչային տեխնիկայից օգտվելու պարզագույն կանոնները, • Աշխատանքի անվտանգության կանոնները:
6.	Մասնագիտական կարողությունները	<p>Աշխատողը պետք է կարողանա.</p> <ul style="list-style-type: none"> • Բարձր որակավորում ունեցող մասնագետի ղեկավարությամբ ոչ բարդ տեխնիկական հաշվարկներ կատարելը, համապատասխան գծագրեր և սխեմաներ մշակելը, համաձայն գործող չափորոշիչների, • Օգտվել գյուղատնտեսական մեքենաների և սարքավորումների շահագործմանը և վերանորոգմանն առնչվող գործող չափորոշիչներից (ստանդարտներից),

Հ/Հ	Անվանումներ	Նկարագրեր
		<ul style="list-style-type: none"> • Կարգավորել և կարգաբերել գյուղատնտեսական մեքենաների և սարքավորումների բանվորական օրգանները, մասնակցել դրանց անսարքությունների բացահայտմանը, ղեկավարել և կազմակերպել դրանց շահագործման և վերանորոգման աշխատանքները, • Հավաքագրել, պահպանել և փոխանցել շահագործման և նորոգման ժամանակ վիճակագրական տարբեր բնույթի տվյալներ, • Կազմել շահագործման և նորոգման ընթացքում պարզ աշխատանքների կատարման համար անհրաժեշտ փաստաթղթեր (մասնագրեր, դիագրամներ, աղյուսակներ, գրաֆիկներ, աշխատանքային ծրագրեր և այլն), • Գյուղատնտեսական մեքենաների և սարքավորումների փորձարկումների ժամանակ միացնել համապատասխան չափող գրանցող սարքեր, հետևել և գրանցել դրանց ցուցմունքները:
7.	Պատասխանատվության աստիճանը	Որոշակի ինքնուրույնություն, կամ առավել բարձր որակավորում ունեցող մասնագետի ղեկավարությամբ կատարվող աշխատանք,
8.	Աշխատանքների բարդության աստիճանը	Պարզ և միջին բարդության աշխատանքների կատարում գյուղատնտեսական մեքենաների և սարքավորումների շահագործման և նորոգման գործընթացներում,
9.	Մասնակցությունը գործընթացներում	Գործընթաց 1, 2, 6, 7, 8, 9
10.	Կրթության պահանջը	Միջին մասնագիտական, առանց աշխատանքային ստաժի